ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՈՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-1/18

գույքի աճուրդային վաճառքի կազմակերպման

ք. Երևան «15» հունվար 2018թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ պատվիրատու), ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար Գ. Ալոյանի, ով գործում է համաձայն կանոնադրության, մի կողմից և «Երևանի «Ադամանդ» ապրանքա-հումքային բորսա» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ «բորսա»), ի դեմս կառավարիչ Կ. Եղիազարյանի, ով գործում է համաձայն կանոնադրության, մյուս կողմից (համատեղ հիշատակման դեպքում՝ «Կողմեր»), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1.Պատվիրատուն հանձնարարում է, իսկ բորսան կազմակերպում է պատվիրատուին սեփականության կամ օտարման իրավունքով պատկանող, և/ կամ հաշվեկշռում գտնվող՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող հավելվածներում կամ գրություններում (այսուհետ՝«հավելված») ներկայացված գույքի (այսուհետ՝«գույք») աճուրդային վաճառքը և բորսային ձևակերպումը:

2.Կողմերի պարտավորություններ

2.1.Պատվիրատուն պարտավորվում է.

2.1.1.բորսային տրամադրել գույքը բնութագրող տեղեկատվություն, առկայության դեպքում՝ նաև փաստաթղթերի պատճեներ,

2.1.2.որոշել, կամ գնահատման, կամ այլ գործառնությունների արդյունքների հիման վրա հաստատել գույքի սկզբնական գները հավելվածով, իսկ հերթական «հոլանդական» եղանակով կատարվող աճուրդի համար՝ հատման գները,

2.1.3.ստեղծել համապատասխան պայմաններ պոտենցիալ գնորդների համար՝ գույքին ծանոթանալու և ուսումնասիրելու համար,

2.1.4.սահմանված ժամկետում բաց թողնել վաճառված գույքը գնորդներին, տրամադրելով վերջիններիս համապատասխան հաշվապահական և այլ պահանջվող փաստաթղթեր:

2.2.Բորսան պարտավորվում է.

2.2.1.աճուրդը և բորսային ձևակերպումը իրականացնել բորսայի առևտրի կանոններով և սույն պայմանագրով սահմանված կարգով,

2.2.2.պատվիրատուին հնարավորություն տալ ծանոթանալու աճուրդի իր կողմից իրականացման կանոններին և ներկա գտնվելու աճուրդներին,

2.2.3.ուսումնասիրել և կիրառել պատվիրատուի կողմից ներկայացված առաջարկություններն աճուրդի կազմակերպման վերաբերյալ, եթե դրանք չեն հակասում ՀՀ գործող օրենսդրությանը և սույն պայմանագրի դրույթներին,

2.2.4.արտագնա աճուրդների կայացման դեպքում ապահովել համապատասխան ծառայությունների մատուցումը,

2.2.5.ներկայացնել համապատասխան ամփոփ հաշվետվություններ կատարված աճուրդներով:

3.Կողմերի իրավասություններ

3.1.Կողմերն ունեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր այն իրավասությունները, որոնք անմիջականորեն կամ անուղղակի կապ ունեն սույն պայմանագրի դրույթների կատարման հետ:

4.Աճուրդային գործընթաց

4.1.Հավելվածում նշված սկզբնական գներով բորսան կազմակերպում է առաջին աճուրդը «դասական» կամ «հոլանդական» եղանակով: Առաջին աճուրդի համար սկզբնական գինը համարվում է մեկնարկային:

4.1.1.«Դասական» և «հոլանդական» աճուրդների քանակը սահմանվում է պատվիրատուի կողմից և արտացոլվում է հավելվածում:

4.2.«Հոլանդական» եղանակով կայացվող յուրաքանչյուր հերթական աճուրդում պատվիրատուն կարող է սահմանել ստորին հատման գինը իջեցված որոշակի տոկոսով, հաշվարկված նախորդ կայացած աճուրդի հատման գնից և այդ դեպքում նախորդ աճուրդի հատման գինը համարվում է տվյալ աճուրդի համար մեկնարկային գին:

4.3.Համաձայն բորսայում ընդունված առևտրի կանոններին «հոլանդական» աճուրդի ժամանակ ցանկացած գնային սահմանին ավելի քան մեկ հավակնորդի առկայության դեպքում, աճուրդավարը պարտավորվում է այդ պահից անցնել աճուրդի «դասական» եղանակի, վերջին հայտարարված գնի բարձրացմամբ:

4.4.Հիմնական աճուրդի ժամանակը սպառելուց հետո, գնորդներին բորսային դահլիճում տրվում է հնարավորություն, մինչև հաջորդ աճուրդի կայացման օրը գրանցել բորսայում գործարքներ հետևյալ գնային պայմաններով.

4.4.1.եթե վերջին կայացած աճուրդում ֆիքսվել է գործարք տվյալ լոտի չափածրարից, ապա նույն գնով և բարձր

4.4.2.եթե վերջին կայացած աճուրդում չի ֆիքսվել գործարք տվյալ լոտի չափածրարից, ապա աճուրդի օրվա մեկնարկային գնով և բարձր:

5.Ֆինանսական հարաբերություններ

5.1.Բորսայի միջնորդավճարը, վերջինիս կողմից մատուցած ծառայությունների դիմաց, սահմանվում է գործարքային գնի _4%-ի չափով և վճարվում է աճուրդի կայացման օրվանը հաջորդող հինգ բանկային օրվա ընթացքում:

5.2.Գնորդն աճուրդի կայացման օրվան հաջորդող հինգ բանկային օրվա ընթացքում կամ պատվիրատուի հետ փոխհամաձայնեցված այլ ժամկետում պետք է վճարի պատվիրատուին վերջինիս հասանելիք գումարը: Սեփականության իրավունքով գույքը գնորդին է անցնում հաշիվ-ապրանքագրի կամ այլ համապատասխան փաստաթղթերի ստորագրման պահից, իսկ օրենքով սահմանված դեպքում՝ պետական գրանցումից հետո:

5.3.Եթե գնորդի կողմից գործարքի ամբողջ գումարը վճարվել է բորսայում, ապա այդ գումարի _96%-ը փոխանցվում է պատվիրատուի կողմից ներկայացված հաշվարկային հաշվին կամ մուտքագրում է վերջինիս դրամարկղ՝ երկու բանկային օրվա ընթացքում:

5.4.Եթե գնորդի կողմից գործարքի ամբողջ գումարը վճարվել է պատվիրատուին, ապա այդ գումարի _4%-ը փոխանցվում է բորսայի կողմից ներկայացված հաշվարկային հաշվին կամ մուտքագրում է վերջինս դրամարկղ՝ երկու բանկային օրվա ընթացքում:

5.5.Եթե գնորդի կողմից աճուրդի օրը բորսային վճարվել է վերջինիս միջնորդավճարը, ապա գործարքային գումարի _96%-ի վճարումները գնորդը պետք է կատարի համաձայն 5.2 կետում նշված կարգի և ժամկետում:

6.Լրացուցիչ դրույթներ

6.1.Գույքի վաճառքից առաջացած հարկերը պատվիրատուն և բորսան վճարում են ինքնուրույն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2.Բորսան չի կրում պատասխանատվություն պատվիրատուի կողմից ներկայացված՝ գույքի և իրեն բնութագրող տվյալների անհամապատասխանության համար:

6.3.Պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով, միևնույն ժամանակ դրա գործողությունը կարող է դադարեցվել կողմերի փոխհամաձայնությամբ կամ կողմերից մեկի պահանջով, տաս բանկային օր առաջ մյուս կողմին գրավոր տեղեկացնելու դեպքում:

6.4.Պայմանագիրը և նրա առանձին դրույթները կարող են փոփոխվել կողմերի համաձայնությամբ:

6.5.Սույն պայմանագրի դրույթների չկատարման կամ թերի կատարման համար կողմերը կրում են պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառությամբ՝ ֆորս-մաժորային հանգամանքների առաջացման դեպքերի (ջրհեղեղ, երկրաշարժ, պատերազմ, հեղաշրջում և այլն): Ֆորս-մաժոր է համարվում նաև սույն պայմանագրի գործողության ընթացքում Կառավարության կամ Օրենսդիր մարմնի կողմից այն իրավական ակտերի ընդունումը, որոնք որևէ կերպ խոչընդոտում են պայմանագրի դրույթների կատարմանը:

6.6.Պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից հայերեն լեզվով՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

6.7.Պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

7.Կողմերի ռեկվիզիտներ և վավերացումներ

Պատվիրատու
«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
ՀՎՀՀ 01501898
Հասցե՝ ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
Հ/Հ 1570027609970100 «Ամերիաբանկ» ՓԲԸ

Գ. Ալոյան

Կ.Տ.

Բորսա
«Ադամանդ» ԵԱՀԲ ՓԲԸ
ՀՎՀՀ 02201301
Հասցե՝ ք. Երևան, Ագաթանգեղոս, 6/1
Հ/Հ 1570010034150100 «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հեռ. 010/ 563107
e-mail: info@yercomex.am;URL: www.borsa.am

Կ. Եղիազարյան

Կ.Տ.

ք. Երևան «15» հունվար 2018թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հ/հ	Անվանումը, մակնիշը	չափման միավորը	քանակը	մեկ միավորի մեկնարկային գինը, ՀՀ դրամ
1	Դյուրակիր ռադիոկայան ICOM IC-F26	հատ	19	5 000.00
2	Դյուրակիր ռադիոկայան ICOM IC-F4026T	հատ	2	5 000.00
3	Մարտկոց BR-232	հատ	5	4 000.00
4	Վերահաղորդիչ ICOM IC-FR6000	հատ	1	360 000.00

Աճուրդների ընթացակարգը՝ դասական եղանակով:

Պատվիրատու
«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
ՀՎՀՀ 01501898
Հասցե՝ ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
Հ/Հ 1570027609970100 «Ամերիաբանկ» ՓԲԸ

Կ.Տ. _____ Գ. Ալոյան

Բորսա
«Ադամանդ» ԵԱՀԲ ՓԲԸ
ՀՎՀՀ 02201301
Հասցե՝ ք. Երևան, Ագաթանգեղոս, 6/1
Հ/Հ 1570010034150100 «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հեռ. 010/ 563107
e-mail: info@yercomex.am;URL: www.borsa.am

Կ.Տ. _____ Կ. Եղիազարյան